Առաջին բացված դուռը

Կենտրոնացում Աչքերի ցանկությունը մի մեծ դուռ է, որով սատանան մտնում է մեր կյանքի մեջ: Մենք այդ դուռը բացում ենք ագահության, անհավատության և վախի միջոցով:

Ուսումնասիրություն Բանալի համարներ՝ Ծնն. 3.1-6, Մաղ. 3.7-12:

Ինչպես Ադամն ու Եվան բացեցին առաջինը դուռը սատանայի համար աչքերի ցանկության միջոցով, այնպես էլ մենք ենք վարվում, երբ տասանորդ չենք տալիս: Աչքերի ցանկությունը դրսևորվում է երեք ձևով.

- *Ագահություն:* (Ծնն. 3.1-6, Ծնն. 4.3-7, Ղևտ. 27.30, Ել. 13.1-2, Ել. 23.19):
  Երբ Ադամն ու Եվան կերան արգելված ծառից, նրանք վերցրին այն, ինչը պատկանում էր Աստծուն: Մենք նույնն ենք անում, երբ տասանորդ չենք տալիս: Աստված մեզ ստուգում է տասանորդի միջոցով, քանի որ դա ցույց է տալիս, թե արդյոք մենք մեր հույսը դնում ենք Նրա վրա, թե ոչ:
- *Անհավատություն:* (Մաղ. 3.7-12, Մաթ. 23.23, Հեսու 6.19, 7.11-12):
  Իսրայելացիները ցույց էին տալիս իրենց անհավատությունը, երբ տասանորդ չէին տալիս: Եկեղեցում որոշ մարդիկ չեն հավատում, որ տասանորդ տալը ճիշտ է նաև այսօր: Աստված ասում է, որ մենք թալանում ենք Նրան, երբ տասանորդ չենք տալիս: Նա օրհնում է մեզ և պաշտպանում ուտողից, երբ տասանորդ ենք տալիս:
- *Վախ:* (Ղուկ. 22.3, Հովհ. 12.1-6, Մաթ. 26.15, 27.3-5, Ել. 21.32):
  Հիսուսի աշակերտ Հուդան սատանայի համար դուռ բացեց ապագայի հանդեպ վախի միջոցով: Որոշ հավատացյալներ տասանորդ չեն տալիս նույն վախի պատճառով: Մենք հակառակորդի կապանքի մեջ բռնված ենք, եթե գողանում ենք Աստծուց և որոշում ենք տասանորդ չտալ:

Խմբի դինամիկ գործողություն Եթե դեռ չեք արել, որոշեք իրականացնել «Խումբը տալիս է» նախագիծը կամ մեկ այլ բան, որով քո խումբը կարող է միասին ծառայել համայնքի մեջ: Շուտ ծրագրիր դա, քանի դեռ ձեր օրացույցը շատ չի ծանրաբեռնվել: Դուք կյանք ու ուրախություն կգտնեք միասին ծառայելու մեջ:

Քննարկում

1. Ինչպե՞ս դու առաջին անգամ լսեցիր տասանորդի մասին: Դու դրակա՞ն, թե՞ բացասական տպավորություն ունեցար դրա վերաբերյալ:

2. Կարդա Ծննդոց 3.1-6-ը: Եվան մտածեց, որ Աստծո բոլոր տվածներից բացի կա մեկ այլ բան, որ կարող էր իրեն երջանկացնել: Ինչքա՞նով է սա նման մեր մտածելակերպին: Ի՞նչ ձևով ենք մենք փափագում «ավելին» ունենալու, նույնիսկ եթե առատապես օրհնված ենք:

3. Ինչպե՞ս է տասանորդ տալը փակում դուռը ագահության, անհավատության և վախի համար:

4. Կարդա Մաղաքիա 3.6-12: Այս հատվածը պարունակում է և հանդիմանություն և խոստում: Ի՞նչ է այն մեզ պատմում Աստծո բնավորության և մեր հանդեպ Նրա սրտի մասին:

5. Դու գիտե՞ս դեպք, երբ տասանորդը փոխել է քո կամ մեկ ուրիշի կյանքը: Խնդրում եմ, պատմիր դա խմբում:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Աստված ստուգում է մեզ տասանորդի միջոցով, քանի որ այն ցույց է տալիս, թե ում վրա ենք դրել մեր հույսը:
- Աստված օրհնում և պաշտպանում է մեզ ուտողից, երբ մենք տասանորդ ենք տալիս:
- Մենք դուռը փակում ենք սատանայի դիմաց, երբ տասանորդ ենք տալիս:

Աղոթիր

Աղոթիր, որ Աստված խմբի յուրաքանչյուր անդամի կյանքում կոտրի ագահության, անհավատության և վախի ամրոցները: